# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

**ԹԻՎ 31-Լ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ԹԻՎ 18-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝

***ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝***

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության վարչությունների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 18-Լ հրամանի 10-րդ հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) 8-րդ կետի 3-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետ.

«4) Նախարարության այլ ստորաբաժանումների իրավասությանը չվերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական վարույթի իրականացումը:».

2) 19-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 11.1-ին ենթակետ.

«11.1) Վարչության պետի հանձնարարությամբ, Վարչության իրավասության սահմաններում, իրականացնում է այլ գործառույթներ.».

3) 20-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին ենթակետ.

«8.1) Վարչության պետի հանձնարարությամբ, Վարչության իրավասության սահմաններում, իրականացնում է այլ գործառույթներ.».

4) 21-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին ենթակետ.

«4.1) Վարչության պետի հանձնարարությամբ, Վարչության իրավասության սահմաններում, իրականացնում է այլ գործառույթներ.».

5) 22-րդ կետում լրացնել՝

ա. հետևյալ բովանդակությամբ 2.1-ին ենթակետ.

«2.1) Նախարարության այլ ստորաբաժանումների իրավասությանը չվերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրականացում է վարչական վարույթ՝ Նախարարության անունից.».

բ. հետևյալ բովանդակությամբ 5.1-ին ենթակետ.

«5.1) Վարչության պետի հանձնարարությամբ, Վարչության իրավասության սահմաններում, իրականացնում է այլ գործառույթներ.»:

***Արփինե Սարգսյան***

**21.04.2026թ.**
**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ**
**ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ**